ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՀԽ «ՀԱՎԱՏՔ ԵՒ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՆԴԱՄՆԵՐԻՆ

Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵՀԽ «Հավատք եւ կարգ» հանձնախմբի գործադիր վարչության 31 անդամներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը Նորին Սրբությանը ներկայացրեց հանձնախմբի գործադիր վարչության անդամներին, անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ միջեկեղեցական կազմակերպությունների, մասնավորապես՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջեւ առկա ջերմ հարաբերություններին ու համագործակցությանը:

Այնուհետեւ հանձնախմբի մոդերատոր Միտրոպոլիտ Վասիլիոսը (Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցի), շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ջերմ հյուրընկալության համար, ներկայացրեց հանձնախմբի առաջիկա անելիքները, հանձնախմբի վերակազմավորման հետ առնչված հարցերը:

Ապա հյուրերին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարի գալուստ մաղթելով նրանց համայն հայության հոգեւոր կենտրոն: Նորին Սրբությունը հանձնախմբի անդամներին ներկայացրեց Հայոց Եկեղեցու ներկայիս իրավիճակը, մարտահրավերները եւ գործունեությունը տարբեր ոլորտներում: Վեհափառ Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց միջեկեղեցական հարաբերություններին՝ մաղթելով, որ Աստծո սերը ներկա լինի դրանցում եւ միավորի Քրիստոսի Ս. Եկեղեցին: Հայոց Հայրապետը նաեւ գոհունակությամբ նկատեց, որ վարչության անդամների ներկայությունը Հայաստանում առիթ կտա ճանաչելու Հայ Եկեղեցին եւ հայոց հոգեւոր կյանքը, ինչպես նաեւ կքաջալերի հավատավոր հայորդիներին եւ կզորացնի նրանց հավատը:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց եկեղեցականների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՎՍՏՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հունիսի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրիայի եւրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարար Միխայել Շպինդելեգերի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով պատվիրակությանը՝ Նորին Սրբությունը նկատեց, որ նախարարի այցը լավագույն վկայությունն է այն ջերմ հարաբերությունների, որ առկա են երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ: Հայոց Հայրապետը նաեւ գոհունակություն հայտնեց Ավստրիայի

հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատարության համար՝ նշելով, որ հայ համայնքի առկայությունը կարեւոր խթան է փոխհարաբերությունների զարգացման ճանապարհին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վիճակին խորհրդային տարիներին եւ Հայրենիքի անկախացման շրջանին, ինչպես նաեւ ներկայիս գործունեությանը կրթական եւ ընկերային ոլորտներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՄՆԱԿՑԵՑ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 17-ՐԴ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Հունիսի 28-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում տեղի ունեցավ Ուղղափառության միջխորհրդարանային համաժողովի 17-րդ կոնֆերանսի բացման արարողությանը, որին մասնակցեց եւ համաժողովի մասնակիցներին իր Հայրապետական օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Համաժողովին մասնակցում են 16 երկրների շուրջ 70 պատվիրակներ:

Մինչ բացման արարողությունը համաժողովի մասնակիցները ծաղիկներ դրեցին 1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Այնուհետեւ ՀՀ ԱԺ Ոսկեզօծ դահլիճում իր աշխատանքն սկսեց 17-րդ տարեկան գլխավոր վեհաժողովը: Համաժողովի բացմանը ողջույնի եւ օրհնության խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 5-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հունիսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գրողների համահայկական 5-րդ համաժողովի շուրջ 70 մասնակիցներին:

Միասնական տերունական աղոթքից հետո Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց համաժողովի մասնակիցներին եւ համաժողովի օրակարգը: «Ամեն անգամ գալիս ենք ստանալու Մայր Աթոռի եւ Ձեր օրհնությունը, որը կարեւոր նշանակություն ունի հոգեւոր եւ գիտամշակութային կապերի համար»,- նշեց Լ. Անանյանը՝ շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին եւ հանուն մասնակիցների ընծայաբերելով «Արդի հայ քնարերգության» երկհատորյակը՝ ի նշան սիրո եւ նվիրումի հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: